

հետագայով առաջարկեց նորից ընտրութիւն կայացնել կիրակի, հոկտեմբերի 7-ին:

Այս տնդամ մի փոքր զգաստութիւն մտցվեց ընտրողներէ մէջ, որպէսզի ձայները չը բաժանվին նախկին ընտրութեան պէս. և ձայնաւորները—քուէարկողները—թէպէտ այս սնդամ աւելի քիչ էին, բայց իրանց ձայները կենտրոնացրին երկու թեկնածուներ վրա, այն է՝ Սենեքերի մ Արծրունու և Երեմիա Տէր Վարդանեանի թեկնածութեան վրա: Դրանցից առաջինը ստացաւ 57 ձայն, իսկ երկրորդը՝ 58 ձայն (մի քանի ձայն էլ հայերէն էին գրված թերթիկներ վրա, բայց օրէնքով այդպիսիները հաշիւ չառնվեցին):

Այդպիսով ուրեմն Երեմիա Տէր Վարդանեան թէպէտ ընտրված էր համարվում, բայց որովհետեւ նա հրաժարվեց (ի նկատի առնելով իր ծառայութիւնը զինուորագրական ատենանում, որը արդէն սկսել է իր գործունէութիւնը), ուստի մեր քաղաքի պատուիրակ որոշվեց Ս. Արծրունի, որին և հետագայով տեղեկութիւն տրվեց քաղ. աւագի կողմից:

Իսպի Ս. Արծրունուց, մեր գաւառը տուել է նաև 4 հայ և թուրք գիւղացի պատուիրակներ: Վերջիններս քաղաքական դասանանքը թէպէտ չէ կարելի որոշել, թէ որ կուսակցութեան են պատկանում, իսկ Ս. Արծրունին, հասանօրէն, յարելու է առաջադիմականներին, որ և նոր-Բայազետի ընտրողների ցանկութիւնն է իսկապէս:

Որսորդ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԻ ԱՐԶԱԳԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

I

Մօզզով, 14 հոկտեմբերի

Շարաթ, հոկտ. 13-ին, Մօզզովի ս. Աստուածածին եկեղեցում պատարագից յետոյ, ներկայութեամբ հայոց եկե-ծիս. զպրօցի ուսուցչ. կազմի և աշակերտուհիներին, հոգեհանգիստ կատարվեց հայ գրոց հանգուցեալ վաստակաւորների համար: Հետեւեալ օրը ս. Ստեփաննոս եկեղեցում, հանդիսանալով պատարագից յետոյ, հոգաբարձ. և ուսուցչ. կազմի, աշակերտուհիներին և ժողովրդին ներկայութեամբ կաթողիկոսական մաղթանք կատարվեց: Ապա ժողովուրդը գիմեց զպրօցի դահլիճը, զպրօցական հանդիսին ներկայ լինելու համար:

Գպրօցի դահլիճում պատից կախված էին ս. Սահակ և Մեսրոպ թարգմանիչներ պատկերները, որոնց տակ մեծ թւանշաններով գրված էին «112, 1500 և 1912» թւականները:

Հանդէսը սկսվեց քառածայն խմբի «Հայր մերով»: Քահանայական դասը շուրջառաջեալ երգեց «Նմանեալ Մովսիսի» շարականը, որից յետոյ ուսուցիչ Պ. Յովհաննիսեանը հասկացրեց ժողովրդին տառերի գրութի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի միացեալ տօնի համազգային նշանակութիւնը:

Ուսուցչի բանախօսութիւնից յետոյ քառածայն խումբը, դարձեալ նոյն ուսուցչի ղեկավարութեամբ, երգեց «Տէր կեցո» օրհներգը, որից յետոյ սկսվեց մանկական ներկայացում «Գող» սերտը գող», պիէս 1 գործ: Ասպակախութիւն:

Ներկայացումից յետոյ մի քանի աշակերտուհիներ կարգացին մանկական դասնաւորներ: Ընդմիջումներին երգեցին խումբը երգում էր մանկական երգեր:

Հանդէսը վերջացաւ ժամը 2-ին:

Հանդիսականները զո՞ն սրտով հեռացան:

Վարդան Վարդանեան

II

Փօրի, 17 հոկտեմբերի

Շարաթ, հոկտ. 13-ին, Թարգմանչաց տօնի օրը, Էլմիածին Թորեկանական Յանձնաժողովի կազմած ծրագրի համաձայն, տեղիս Աստուածածնայ մայր եկեղեցում կայացաւ պատարագ և պատարագից յետոյ հոգեհանգիստ հայ գրականութեան և արպագրութեան վաստակաւորների համար:

Պատարագին և հոգեհանգիստեանը ներկայ էին տեղիս քահանաները և հայոց ծխաղպրօցի ուսուցչ. կազմը աշակերտութեան հետ միասին:

Կիրակի, հոկտ. 14-ին, նոյն եկեղեցում հանդիսաւոր պատարագից յետոյ կատարվեց հայրապետական մաղթանք: Այդ օրը բացի եկեղեցական և զպրօցական ներկայացուցիչներից և հայոց զպրօցի աշակերտուհիներից՝ ներկայ էին նաև պետական զպրօցների հայ աշակերտուհիները և երկսեռ հայ հասարակութիւնը:

Պատարագից յետոյ եկեղեցում եղած հասարակութիւնը ամբողջութեամբ գիմեց զէպի հայոց զպրօցը, որտեղ նշանակված էր զպրօցական հանդէս:

Գպրօցի վարժուհի օր. Ն. Ամիրջանեանցը մանրամասնաբար բացատրեց ներկայ կողմ հասարակութեանը երկու մեծ տօների, այսինքն հայոց տառերի գրութի 1500 և տպագրութեան 400-ամեակի պատմական նշանակութիւնը և Մեսրոպի գրութի ունեցած ազդեցութիւնը հայերի կուսակական զարգացման վրա:

Թէև յօրեկանական ծրագրերը, ուշ ստանալու պատճառով, հանդէսից չըստ օր առաջ էր յանձնված զպրօցի աւագ ուսուցչի Գրիգոր Միթրաբեանի, բայց և այնպէս նա ամենայն ջանք գործ էր դրել հանդէսը շքեղացնելու և հասարակութեանը բաւարարութիւն տալու համար:

Գպրօցի աշակերտուհիները երգեցին զանազան երգեր, կարգացին ստանաւորներ, աշակերտուհիներից մէկը մինչև անգամ օրվայ պատշաճ խօսեց, բանախօսեց նաև վարժուհի օր. Տէր Ամատունեանը: Հանդէսը վերջացաւ հայկական պարերով, որ, օր. Ամիրջանեանի ղեկավարութեամբ, աշակերտուհիները պարեցին շատ աջող ժամը 3-ին հանդիսականները շորհակարութիւն յայտնելով զպրօցի մանկավարժական կազմին ուղեւորված և ուրախ սրտով թողեցին զպրօցի դահլիճը:

Աւելորդ չէ այստեղ յիշել, որ հայոց զպրօցի մանկավարժական կազմը այս տարի շատ աջող է կազմված:

Մեսրոպ Մարութեանց

III

Նորա (Հին Նախիջ. գաւ.), 15 հոկտ.

Հայկական Մեսրոպեան տառերի գրութի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի տօնի մասին լրագրութիւնից տեղեկութիւն իմանալով, շրջանիս գործակալ Ն. Դևոնդ ք. Սմբատեանցը նախօրոք յայտնել էր իր իշխանութեան տակ եղած գրեգորի քահանաներին, որ ամսին 13-ին և 14-ին բոլոր և կեղեցիներում պատարագ մատուցանեն և տօնի առիթով խօսեն ու բացատրեն ժողովրդին:

Նորա օրվա կենսարձատեղի, շրջանի գրեգորից հաւաքվել էին ներկայացուցիչներ, և պատարագից յետոյ փառաւոր հանդէսով, խուռն բազմութեան ներկայութեամբ տօնվեց մեղ լեզու և կենք ներշնչող մեր անմահ Թարգմանչաց տօնը, որի վերաբերութեամբ, թէ Մեսրոպի կենսագրութեան, թէ հայոց տառերի գրութի և տպագրութեան մասին մանրամասնօրէն և մատչելի լեզուով ժողովրդին հասկացրեց պատարագիչ Դևոնդ ք. Սմբատեանցը:

Դևոնդ քահանայի ազդու բանախօսութիւնը խոր թափանցեց մեր լեռնական ժողովրդի խոպանացած սրտերում: Հանդիսականները զգացված և ուրախ տպաւորութեան տակ հեռացան հանդիսից: Ուսուցիչ

ՂԱՐԱԲԱՂԸ ՏՆՏԵՍԱՊԷՄ ՁԷ ԵՄԱԴՆՈՒՄ

I

Իւրեքանչիւր տարի Դարբարում ծնվում են 4507 հոգի, մեռնում են 2047, ժողովրդին իւրաքանչիւր տարի աւելանում է 2460 հոգի (Նուխտ փոխանորդութիւնը չը հաշւած): Դարբարոն ունի 200,000 շունչ ժողովուրդ, սրա վրա իւրաքանչիւր տարի աւելացրէք 2460 հոգի, այն ժամանակ դուք կը տեսնէք, որ Դարբարում մի 20 տարեց յետոյ կունենայ մօտ 250,000 ժողովուրդ: Այս թելը, որ վերացանալն չեն, այլ միանգամայն ճշգրիտ, վերջված իւրաքանչիւր եկեղեցու մատենանից, ցոյց են տալիս, որ Դարբարի ժողովուրդը ամեն տարի աճում է, աւելանում է, իսկ մի բան, որ աւելանում է, բնական օրէնք է, որ պիտի սեղմվի իր շրջապատին և այնքան ճնշի նրան, մինչև որ պատռի նրան և սահմանները դուրս գայ, իրան համար ազատ տեղ գտնելու ձգտումով: Իրկար ժամանակ է, որ Դարբարի ժողովուրդը դուրս է եկել իր շրջապատից, և իր շրջակայքում ազատ տեղ չը գտնելով՝ նրա հոսանքը ուղղվել է այնպիսի տեղեր, ուր ազատ շնչելու, ապրելու միջոց կայ: Դարբարի ժողովուրդը բազմանալով և բուն հայրենիքում ապրելու հնարաւորութիւն չը գտնելով՝ դիմել է գաղթականութեան, մի տեղ հանգիստ վայր և օթեան գտնելու համար: Եւ դարբարցիները իւրաքանչիւր տարի մեծ հոսանքով գաղթում են այնպիսի վայրեր, ուր թէև օդը և ջուրը յարմար չէ իրանց կազմուածքին և առողջութեանը, այնու ամենայնիւ բնակվում են այնտեղ, որովհետև իրանց զգում են ազատ, գտնում են ապրելու հնարաւորութիւնը:

II

Պարզագոյն թելերը ցոյց են տալիս, որ Դարբարի ժողովուրդն աճում է, ժողովուրդն աճում է, իսկ երկիրը չի աճում և, ընդհակառակը, կարծես թէ կուչ է գալիս, սեղմվում է և ժողովրդին տեղ չի տալիս ընդարձակվելու, հանգիստ ապրելու համար: Դարբարից հողը չի բաւականանում իր ժողովրդին և ակամայից քաջցի է տալիս՝ իր հարազատ զաւակներին հեռանալու իրանից, և ժողովուրդը թողնում է իր մայր երկիրը, հայրենիքը, սասնորակ աղբիւրները և զիմում, երբեմն, ինքն էլ չը գիտէ՝ թէ ուր:

III

Գիւղական ժողովուրդն ապրում է հողով. նա երկրագործ է և այգեգործ. գրանից դուրս իսխալված է նրա զգոյթիւնը, որովհետև ուրիշ արհեստ չը գիտէ, կամ եթէ գիտէ այն պէտք չէ դալիս գիւղում: Օրինակ՝ կոշիկակարութիւնը, գիւղացու ինչին է պէտք այդ արհեստը, երբ ամենքը տրեխներ են հագնում և այն էլ իրանք են կարում: Այլ է քաղաքացու բանը. նրան այնքան հող է պէտք, որ մի տուն կառուցանէ. ուրիշ ինչ բան է պէտք նրան հողը, երբ վար ու ցանք անել չը գիտէ: Այդպէս և քաղաքներում ծաղկած է կամ ծաղկում է աւետուրը և արհեստը, և ժողովուրդը գրանցով պահպանում է իր գոյութիւնը: Գիւղացիները իրանց դուրսութիւնը պահպանում են հողից արտադրված արդիւնքով: Ստացվում է այդ արդիւնքը՝ նա ապրում է, չէ ստացվում, և նա ընկճվում է դժուարութիւնների, պարտքի, տակ: Պետական հարկերի համար վաճառի են հանվում

նրա գ... նուստէ... վճարե... արտա... թիւնը... է հար... կորեկ... ցորեկ... սրեւե... լուսն... ներ... է հար... հարկ... և այլ... նա օր... լեռայ... այլ... ցան... ճան... ծացն... զբա... Տա... բազի... զրե... դոն... տակ... բարձ... սակ... լով... նի... գրվ... գաւ... Ռու... յանձ... յուս... ուս... բառ... բաց... ար... Ղա... թէ... այդ... մար... է զ... վը... գտն... ապ... թիւ... լու... զի... կի... ծի... գոր... Ղ... տն... նա... պար... զոր... նա... և շ... բա... զի... մի... եղ... սել... բէ... բո... բո... ու... թ... Գի... նկ... նկ... սա... սան... գա... զի... թ... ծա... երկ... կրկ... նա... մէջ... բար... բուն... բուն... զա... բա... կ... ըստ... իր...

ՀԱՄԱԶԳՄՅԻՆ ՏՕՆԻ ԱՐԶԱԳԱՆՔԸ ԳԱ-  
ԻԱՌՈՒՄ

I

Ախալքալաք գիւղ, 16 հոկտ.

Հոկտեմբերի 13-ին տեղիս ս. Աստուածածնի եկեղեցում, հայոց դպրոցի աշակերտուհիներին, սրանց ծնողներին, հոգաբարձուհեան և ուսուցիչ-ուսուցչուհու ներկայութեամբ կատարվեց Թարգմանչաց տօնը:

Աւուր պատշաճի խօսեց Յար. ք. Միրիմանեանը, վրացերէն բացատրեց ս. Սահակի և Մեսրոպի գիւտի նշանակութիւնը. նա խօսեց նոյնպէս տպագրութեան 400-ամեակի մասին: Քարոզից յետոյ կատարվեց հոգեհանգիստ հայ գրականութեան և տպագրութեան վաստակաւորների համար:

Երկրորդ օրը, կիրակի, ամսիս 14-ին, տեղիս գործակալ Յարութիւն ք. Միրիմանեանը պատարագից յետոյ, կատարեց հայրապետական մաղթանքը ներկայութեամբ բազմաթիւ ծխականների: Դրանց ևս բացատրվեց հայոց գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400 ամեակի նշանակութիւնը: Ոսեց էջմիածնի և կաթողիկոսութեան մասին, խօսք եղաւ նաև հիմնվելիք դպրոցական ֆօնդի մասին:

Երանուհի Գողգոթեան

II

Շուշի, 14 հոկտեմբերի

Հոկտ. 13-ին Շուշու հայոց թեմակառն և Մարիամեան օրիորդաց դպրոցները տօնեցին մեր տառերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400 ամեայ յօրեկեանը: Այդ օրը Ղազանչեցոց եկեղեցում մաղթանք կատարվեց, որին ներկայ էին թեմական դպրոցի և միւս բոլոր ծխ. դպրոցների աշակերտները ու աշակերտուհիները ուսուցչական աճբողջ կազմի հետ միասին: Մաղթանքից առաջ, յօրեկեանի առիթով խօսեց նոյն եկեղեցու միաբան Եղիշէ քահ. Թարխանեանը, ժողովրդին պարզ ու ամփոփ տեղեկութիւն տալով, տառերի գիւտի մասին և նրանց կատարած կուլտուրական դերը հայ ժողովրդի կեանքի մէջ:

Մաղթանքից յետոյ երկսեռ բազմութիւնը շտապեց թեմական դպրոցի դահլիճը տօնի առիթով կատարվելիք հասդէսին ներկայ լինելու համար: Հանդէսը սկսվեց քառաձայն «Հայր մեր»-ով, որից յետոյ խօսեց դպրոցի տեսչի օգնական Իսահակ Տէր-Ղազարեանը, այդ նուիրական տօնի կուլտուրական նշանակութեան մասին: Մարիամեան օրիորդաց դպրոցի կողմից խօսեց աւագ-ուսուցիչ Յովակիմ Ստեփանեանը, տեղեկութիւն տալով հասարակութեանը լեզուների ծագման ու հայոց տառերի գիւտի մասին:

Արտասանվեցին տօնին վերաբերող մի շարք ոտանաւորներ և մէջ ընդ մէջ երգում էր նոյն դպրոցի դասատու Ստ. Դեմոստրաստի քառաձայն խումբը: Երգերը աջող էին երգվում և բոլորն էլ սզգային բովանդակութիւն ունէին: